Ամեն տարի Կալիֆորնիայի բոլոր դպրոցները պէտք է պատրաստեն դպրոցի Հաշուետուութեան վիճակացոյցը (SARC)։ Զեկոյցի մէջ ներառում են տեղեկութիւններ՝ յատկագումարների, ծրագրերի ու աշակերտների արձանագրած ուսումնական յաջողութիւնների, ինչպէս նաև մեր դպրոցի ուսման ընդհանուր միջավայրի մասին։

Դուք կարող էք 2008-2009 թուականի դպրոցի Հաշուետուութեան զեկոյցը (SARC) ստանալ ինտերնետից հետևեալ http://www.gusd.net հասցէով։ Իւրաքանչիւր դպրոց ունի համակարգչային իր ուրոյն էջը, դպրոցի Հաշուետուութեան զեկոյցի իր ուրոյն տեղեկութիւններով։ Դպրոցի գրասենեակը նաև կարող է ձեզ տրամադրել սոյն զեկոյցի մէկ օրինակը։ Դպրոցի Հաշուետուութեան վիճակացոյցի թարգմանութիւնը կարելի է ստանալ դպրոցի քարտուղարից։

Բացի այդ, Կալիֆորնիա նահանգի դպրոցների Հաշուետուութեան զեկոցը, որը պահանջւում է «Ոչ մի երեխայ չպէտք է անտեսուի» օրէնքի համաձայն, կարելի է ստանալ Կալիֆորնիայի Լուսաւորութեան վարչութեան կայքէջից հետևեալ http://www.cde.ca.gov/ta/ac/sc/ հասցէով։